



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

July 1981

6111





ԱՐԻԵԼ ՀԱՅ ՕՐԻՈՐԴՆԵՐԻՆ)

ԱՎՅԱԼ ԳԵՂՐԳԻԵՒԱՅԻ

213

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ




(ԿՐՃԱՏՈՒԹԵԱՄԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ.)



ՄՈՍԿՈՒԱ.

ՏՊԱՐԱՆ Մ. ԲԱՐԻՍՈՒԴԱՐԵԱՆԻ.

1890



2012

24225. ч. 3

(ԱՐԴՅՈՒՆՎՈՐ ՑԱՌ ՎՃԱՋ)

1804 Ժ Ի Թ Պ Ո Ւ Բ Ա Մ Ց Ս Ա

Զ Ե Ղ Ա Կ Ո Ր Մ Ա Մ Ց Մ Ց Ծ Ը

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 25 Августа 1890 г.



1880

3246-55  
8

2004

Տ Հ Օ Տ

առաջի ժամանակ ու այժմու ու. խոսով  
այս գր մութափուցու պահանջման ուժի մասն  
առաջ առաջնական մեջ պահպակ պարագան ուժուա  
ութ այդ բազութեալ սիմբոլ մենք պահպակուա  
ութ բանուա. և առաջ այս մեջ այս պահպակուա  
առաջ այս այս պահպակուա այս իւ  
Ի Ի Մ Գ Ա Ս Ի Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Խ Ա Բ Ե Հ Կ Ի Ս  
Ծ Ա Ռ Ա Ց Ե Լ Ը.

Ես ճնուել եմ 1856 թվի յունվարի 6-ին  
Հիւսիս-արևմտեան Թրակեայի մի փոքրիկ քա-  
ղաքում, Պանագիւրիշտում: Մանկութիւնս անց-  
կացրի ծնողներիս մօտ, որոնք մի առանձին սէր  
էին տածում գէպի ինձ, իբրև անդրանիկ զա-  
ւակի և մեծ խնամքով էին հսկում իմ կրթու-  
թեանս վրայ: Դեռ հօթը տարեկան հասակումն  
ինձ տուին ուսումնարան, այս տեղ իմ ընդու-  
նակութիւնով ես շուտով զրաւեցի վագիտուհուս  
սէրը: Վարժուհու և ծնողներիս սիրով ես ո-  
գեստուեցի և սկսեցի աւելի ես խաշսատել, այն-  
պէս որ գասընկերներիս մէջ միշտ առաջինն էի  
լինում: ուստի ուստի պահպակուա այս իւ

Շուտով ես զրաւեցի ուսումնարանի վարչութեան միւս անդամների ուշագրութիւնն էլ. ինձ արդէն ապագայ վարժուհի էին համարում։ Հանգամանքները ամեն կողմից բարեյաջող էին։ Դրա համար, միայն մի բան էր մնում—ստանալ ծնողներիս համաձայնութիւնը։ Նօրս մասին առաջուց կարել էր ատել, որ չի մերժիլ։ Նա իբրև քաշանայ՝ մեր հայրենիքում գոյութիւն ունեցող բացառիկ պայմանների շնորհիւ բուլղար ժողովովի մասաւոր վերածնութեան ասպարէզում ամենաեռանդուն գործիչներից մէկն էր։ Մեր հայրենիքի ամեն մի անկիւնում բացուած բազմաթիւ ուսումնարանները զլիաւորապէս մեր հոգեւորականների եռանդուն գործունեութեան արդիւնքն էին։ Ամեն անդամ երբ տաճիկ կառավարութիւնը Ճնշումներ էր գործ զնում մեր ապագային կրթութիւնը սահմանափակիլու կամ թուլացնելու նպատակով եկեղեցու քաջ հովիւները բարձրացնում էին իրանց ազգեցիկ ձայնը յայտնելու, որ այդ Ճնշումները ոտնակախ են անում կրօնի անձեռնմիսելի սրբութիւնները և այդպիսով Ճնշումների առաջը առնում էին։

Իմ հայրը, որ հոգով մարմնով անձնատուր էր ազգային լուսաւորութեան գործին, պիտի ուրախանար, ՚ի հարկէ, որ ես նրա արժանի ժառանգն եմ լինելու։ Մայրս միայն կարող էր հակառակիւլ ամենքիս ցանկութեանը, որովհետեւ նա անհամբեր սպասում էր Պանազիւրի ուսումնարանում ուսումն աւարտելուն, որպէս զի զրանից յիտոյ ինձ յանձնէ իր վզին ընկած անային հօգսերի մի մասը։ Ուսումնարանի հոգարարձուները զիտէին այդ բոլորը, զրա պատճառով ընդհանուրի ցանկութիւնը իրազործելու համար վճռեցին առհետական կերպով ազդել մօրս փոյս։ Նրանք յանձնեցին վարժուհուս, որ առաջիկայ վերջնական քննութեան համար մի ձառ պատրաստէ, որով ես պիտի հրամարակաւ շնորհակալութիւն յայտնէի ծնողներիս այն բոլոր ջանքերի համար, որ նրանք գործ էին զրել իմ վերայ. յետոյ պիտի յիշեցնէի նրանց, թէ որքան օդուաներ կարող է տալ մեր հայրենիքին ուսումնը, և, վերջապէս, խրնդրէի նրանց բոլոր քաղաքացիների կողմից, որ թշլ տան ինձ շարունակել ուսումն մի որեւէ.

ուրիշ ուսումնարանում, որովհետեւ այդպիսով  
ես կարող կը լինեմ կատարել իմ պարտակա-  
նութիւնը դէպի մեր հայրենիքը, այսինքն մաս-  
նակցել կարողութեանս չափ այն զոհաբերու-  
թիւններին, որ անհրաժեշտ էին հայրենիքի ա-  
պագայ բարօրութեան համար: 13 տարեկան  
աղջկայ արտասանած այդ ձառը լաւ տպաւո-  
րութիւն գործեց հանդիսականների վրայ, աշա-  
կերտուհիների մայրերը շըջապատեցին մօրս  
խնդրելով որ նա կատարէ իմ ցանկութիւնս,  
որովհետեւ անտեսութիւնը շատ չնշին է, համե-  
մատելով այն նպատակի հետ, որին ես էի ձգ-  
տում: Մայրս, 'ի հարկէ, չը կարողացաւ նրանց  
խնդրեքը կոտրել և հենց այնտեղ տուեց իւր հա-  
մաձայնութիւնը:

Եռտով զրանից յետոյ հօրս և Պանագիւ-  
րի ուսումնարանի վարչութեան մէջ սկսուե-  
ցին խորհրդակցութիւններ, որոնց միջոցին նրանք  
վճռեցին ուղարկել ինձ ժեկզնիկ, որովհետեւ  
այն տեղի ուսումնարանը օրինակելի էր ամբողջ  
Բուլղարիայում: Կամենալով թեթևացնել ծնող-  
ներիս, որոնք բացի ինձնից պիտի ուսում տային

մասցած երեխաներին էլ, հայրենակիցներս իրանց  
վերայ վեր առան ուսման ծախքը, սակայն այն  
պայմանով, որ յետոյ հայրենիքումն ուսուցչական  
պաշտօն վարելիս մի որոշեալ տոկոս ոռձնիցու  
յետ դարձնեմ, մինչև որ կարողանամ վճարել  
ինձ վրայ եղած բոլոր ծախքերը: Երբ ամեն ինչ  
պատրաստ էր, ես մնաս բարե ասացի մօրս, որ  
արտասուալից աչքերով բաժանուեց ինձնից, և  
հօրս հետ ձնանապարհ ընկայ: Ժեկզնիկում ինձ  
յարմար գտան եկրորդ դասարանի համար և  
զետեղեցին ինձ ուսումնարանի պանսիօնում:  
Հայրս վերադարձաւ տուն, իսկ ես մնացի ինձ ան-  
ծանօթ և օտար մարդկանց շըջանում միայնակ,  
հաստատ դիտաւորութիւն ունենալով աշխատել  
և արդարացնել հայրենակիցներիս յըսէրը:  
Այստեղ ես շուտով համոզուեցայ, որ բաւական է,  
միայն աշխատասէր լինել և օտարութեան մէջ  
կեանքը այնքան էլ դժուար չի թուիլ: Այդպէս էլ  
եղաւ, տեսչուհին և բոլոր վարժուհիները երկ-  
րորդ շըրաթից արդէն սկսեցին սիրով վերա-  
բերուել դէպի ինձ:

Չորս տարուց յետոյ ես աւարտեցի Եղասա-

տունը, այսինքն Ժեկղնիկի ուսումնարանում աւանդուող գիտութիւնների ամբողջ ընթացքը: Վերջացնելով վերջին քննութիւնս և ուսումնարանելու վկայագրի հետ ստանալով նաև գովասանական թերթ ու պարզե, ես պէտք է հրաժեշտ տայի իմ վարժուհիներիս և բազմնթիւ ծանօթներիս, որոնց հետ մտերմացել էի Ժեկղնիկում եղած ժամանակու: Մանաւանդ գմբեռ էր ինձ համար բաժանուել այն ծանօթներից, որոնց հետ միասին բոլոր ժամանակ «Կանանց Մտերմութեան Ընկերութեան» իսկական անդամ էի: Ազատ ժամերս նորանց հետ միկանել նուիրում էի ես բազմակողմանի գործունեութեան, որ մեզ պարաւորացրել էր այդ հիմնարկութեան կանոնագրութիւննք: Մարդկանց ընթերցարանների նման, այդ հիմնարկութիւնը նոյնպէս նպաստակ էր զրել դրերի, լրագիրների և օտար թերթերի ընթերցանութեան միջոցով լուսաւորութիւն տարածել ժողովրդի աղքատ դասի մէջ և այդպիսով արթնացնել նրանց մէջ ազգային հնքնաձնանաչութիւնը: Այդ հողմից ես շատ լաւ կատարեցի պաշտօնս, այդ երեսում է նրա-

նից, որ տուն վեբագառնալուս ժամանակ շատերը արտասուեցին իմ հեռանալուս պատճառով: Երբ ևս վերաբարձայ տուն, ամբողջ մի ամիս մարդիկ և կանայք, ծերունիներ և պառաններ խմբերով շրջապատում էին ինձ, ցանկալով համոզուել իրանց ամելավ, իմ ընդարձակ զիտութիւնների մէջ, բացի այդ և իմանալ, ի միջի այլոց թէ, ի՞նչ է կատարված ուրիշ քաղաքներում, շատ բանով է արգելօք յետ մեր քաղաքը նրանցից և այլն: Այսպիսի այցելութիւնները սկսեցին ինձ վերջերում զայրացնել և ես աշխատում էի ազատուել նրանցից կարծ, կցկառու պատասխաններով, որ ես տալիս էի երբեմն մինչև անդամ ակամայ: Հայրս նկատում էր այդ ամենը և մի անդամ էլ հարցեց, «այդ թէն է պատահել քեզ, որդիս, ինչու ես այդպէս տիժուլու Զլինի թէ՞ օտարութեան մէջ տպրելով, հովացել ես դէպի մեզ և հիմայ օտարութիւննդ է միտզ ընկել»: Ես աշխատեցի փարատել նրա կամկածանքը և միենոյն ժամանակը խոստովանուեցի, թէ վախենում եմ, որ ներկայ հանդամանքներում ինձ չի յաջնողուի ար-

դարացնել այն յոյսերը, որ զրել է ինձ վերայ  
հայրենիքիս պարտքը: Նա քաջալերեց և խոստա-  
ցաւ օգնել ինձ գործունեութեանս մէջ հարկաւոր  
ժամանակը:

Շուտով սեպտեմբերը եկաւ: Սովորականին  
համաձայն, առաջիկայ կիւրակի օրը ուսումնա-  
րանի կառավարիչները և քաղաքացիներից գլխա-  
ւորները ժողովուեցին հին ուսուցիչների հետ պայ-  
մանները նորոգելու, իսկ ինձ հետ—նոր պայման  
կապելու: Այդ ժողովում, նիւթական միջոցների  
սղութեան պատճառով, ինձ առաջարկեցին տարե-  
կան 3100 պիաստր (210 ր.) ռոճիկ: Ես սիրով  
համաձայնեցի և ցանկութիւն յայտնեցի, պարտ-  
քերս վճարելու համար շարունակ ռոճիկին  
կէսը տալ որովհետեւ, ապրուսոր էժան լինելով:  
մնացած կէսն էլ ինձ բաւական էր: Այսպիսով  
կարելի եղաւ վարձել մի վարժուհի ևս — ինձ  
օգնական: և 300 աշակերտուհի ունեցան 3 վար-  
ժուհի:

Կարծեմ որ հետաքրքիր չի լինի ընթերցողիս  
համար, եթէ մուցնեմ նրան ուսումնարանական  
կեանքի մանրամասնութիւնների մէջ, որովհետեւ

այդ կեանքը ամեն տեղ միատեսակ է, միայն  
պէտք է յիշել որ այստեղ հարկաւոր էր շատ  
աշխատել, պատճառ որ աշակերտների թիւը  
շատ շատ էր:

Են ժամանակը իւրաքանչիւր մարդ աշխա-  
տում էր զրել-կարգալ սովորեցնել իւր որդիկե-  
րանցը: ուսումնարաններ բաց արին ամեն տեղ,  
ուր որ բոլղարական համայնք կար, այսինքն  
իւրաքանչիւր շնուրմ և իւրաքանչիւր գիւղում:

Ամեն տեղ ուսումնարաններում աշակերտները  
լիքն էին, այդ կարելի է զատել մեր քաղաքով,  
ուր 10 բնակչին 1 աշակերտ էր ընկնում: Եւ  
հէնց այդ ժամանակ արեւմտեան լուսաւորուած  
ազգերի մէջ զանուեցին մարդիկ որ մեղ վայ-  
րենի էին անուանում և բարբարոսների հետ  
հաւասարեցնում: Տէրը նրանց հետ ի՞նչ ա-  
նենք, եթէ իրողութիւնը չն ուղում տեսնել:  
Նրանց վարմուքը մեղ էլ շատ չէր ցաւեց-  
նում, որովհետեւ ձգուելով մերնապատակին, մենք  
ուշք չէինք զարձնում, թէ ի՞նչպէս կընայեն մեղ  
վրայ ուրիշները: մենք մեր բանը գիտէինք: Ա-  
մեն մի բուլղարացի և ամեն մի բուլղարուհի հայ-

լենիքին ծառայելու գաղափարով էր ոգևորուած  
և գործում էր, որքան կարող էր: Կրթութեան  
ձգտումը դարձաւ ընդհանրութեան անհրաժեշտ  
պահանջ: Ուսումնարաններին զոհում էին ինչ  
որ կարելի էր, և միևնույն ժամանակը ամեն  
մարդ պարտաւորութիւն էր համարում իւր  
համար՝ առաջ իւր բաժինը:

Ուսումնարանը գարձաւ մեղ համար ա-  
ռաջնակարգ պահանջ: մենք աշխատում էինք  
նրա համար անսափոր և անսպային եռանդով,  
և վերջին ժամանակներում մեր բոլոր գործու-  
նէութիւնը նրա վերայ էինք գարձրած:

Սակայն, որքան մենք աւելի էինք լա-  
րում մեր ոյժերը և որքան աւելի յամառ  
էինք առաջ ընթանում այնքան աւելի անյաղ-  
թելի էին գառնում արգելքները: Բանք այն է,  
որ աաճիկներին դուք չեք գալիս մեր ձգտումը  
դէպի կրթութիւնը: Նրանք զանազան միջոց-  
ներ էին հնարում մեր ոյժերը թույայնելու և  
սահմանափակելու նպատակով. օրինակ՝ նրանց  
համար ոչինչ բան էր՝ իզուր աեղք հալածել  
ուսուցիչներին, փակել այս կամ այն ուսում-

նարանը: Բայց հետեանքը այն էր լինում, որ  
մեր եռանդը կրկնապատճեցում էր: Այս բանը  
նրանց աւելի էր կատաղեցնում: Վերջապէս մի  
ամենաթեթև միջոցի գիմեցին մեր ոյժերը խոր-  
տակելու համար: Այդ եղաւ ապառամբութեան  
ամենամօախկապատճառը: Խախրճի Դոց մէս  
կա ու Ձ. անձնան ու զանու այս այլ ու  
ջն կամացնուուցաւ. Ա. բարդան զանու ջոյ  
ու ու յառաջարկու ձախահղումը՝ Ա. մօրութիւն  
ՊԱՆԱԳԻՒԹԻՄ Ա. ՊՍՏԱՄԵՐՈՒԹԻՒՆԸ. ԵՒՂԻՄ  
Ճառան զա ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ. Համայնա-  
ժառան մասն սուսանուան մասնայոց նարին  
Վաղուց արգեն տաճիկը սովորել է պար-  
կել թախտի վրայ և շրջապատել իրան ամեն  
յարմարութիւններով, որ պահանջում է նրա  
նրբացած փափկասիրութիւնը: Նրա կեանքը  
գարերի ընթացքում կազմուել է այնպէս, որ  
նա շարունակ պէտք է լողայ երկրային զուար-  
ծութիւնների ովկիանոսում:

Երեսում է, բնութիւնը ինքը չէ հակա-  
ռակում նրան, որովհետեւ ուահաթին (հաս-  
րակ ժողովուրդը) սաեղծել է հենց նրա, տաճիկ

համար, այդ սարուկը շարունակ անխօս պիտի կատարէ այն բոլոր հրամանները, որ առաջանում են նրա ցնորական քմահաճութիւնից նրա ի՞նչ գործն է, թէ սարուկը քաղաքիրտ վերակացուի հարուածների տակ արիւն՝ քըրամինքում խեղփում է։ Այդ նրա վիճակն է նա հենց դրա համար էլ ստեղծուել է, որ ամբողջ կեանքը անընդհատ չարչարանքների մէջ անցկացնէ և չհամարձակուէ գանգատուել ոչ իւր յոդնելուն, ոչ քաղցի և ոչ ծարաւի վերայ. հասկանալի բան է, որ անկարելի էր մատածել անդամ ըստիշական հանդստութեան մասին։ Միթէ կը համարձակուէր մէկը ծպտուն հանել իւր վրայ դրած բեռան ծանրութեան պատճառով։

Տարբազդաքարը պատմութիւնը դրական պատասխան է աալիս։ Քանի՛քանի անդամ հատել է բուլղարի զարմանալի համբերութիւնը. նա յուսահատուած թողել է սիրելի ամուսնուն և անպաշտպան զաւակներին դաշտի կամայականութեանը, իսկ ինքը հեռացել է լեռները, ուր անց է կացրել կեանքի վերջին օրերը

բուռն վրէժինզրութեան ծարաւով։ Քանի՛քանի անզամ այդպիսի առանձին առանձին անհատներ միացել են և կատաղած առիւծների պէս լեռնային շղթաներ են անցել՝ իրանց զարաւոր թշնամուն սրմնելու և նրա արիւնը խըմելու։  
«Ազատութիւն կամ մահ, ասում էին նրանք, —ուրիշ ոչինչ։»

Ամբողջ տարիներ էին անցնում և մենք անտրտունջ տանում էինք այդ ծանր լուծը, որովհետեւ անկարելի էր մէկին գանգատուելը — մէր անդրգերեղմանական ձայնը ոչ ոք չէր լսում, իսկ եթէ մինչեւ անդամ նա մէկի ականջն էր համնում, այնու ամենայնիւ անօգուտ էր անցնում, քանի որ լուսաւորուած Արևմուտքի հաշուով այդպիսի դրութիւն հարկաւոր էր։ Սակայն այդ բոլորը այդպէս լինելով, դոնէ Աստուած չէր խլում մէր յօյսը, իւրաքանչիւր շնչաւորի այդ անվիճելի սեպհականութիւնը։ Կեանքի գժուար ըստէներում մենք միշտ միշտարփում էինք նրանով, որ կ'զայ մի ժամանակ, երբ այդ բոլորը այլ ևս չի լինիլ։ Մի

քանի անգամ զէնքը ձեռներիս փորձեցինք բար-  
ոքել մեր դրութիւնը, բայց համոզուերգի, որ  
սցդ դժուար, մինչև անգամ, անկարելի բան է,  
մեր գործունէութիւնը ուրիշ կողմ դարձրինք.  
—արիաբար սկսեցինք կրթութեան գործը; Եց  
էր, մեր կարծիքով, անտանելի լժից աղաքառ-էլ-  
մակ հացած հասապա միջոցը որը գուցէ ան-  
նշան կորուստ էր պահանջում:  
Բայց դաժան բազզը այսուեղ էլ սկսեց  
մեզ հակառակել: Տաճիկները դիտում էին  
մեր իւրաքանչիւր քայլը և այդ պատճառով  
սկսեցին ոչ թէ ուղղակի փակել ուսումնարան-  
ները, ինչպէս առաջ էին անում, այլ միայն  
խլել միջոցները. —կորդել մեր ձեռքից այն  
վերջին կոպէկները, որ մնում էր մեզ մօտ  
անթիւ հարկերը վճարելուց յետոյ: Քանի որ  
կարելի էր, մէնք իհարկէ տալիս էինք պա-  
հանջելուն պէս: Բայց երբ մեր միջոցները սպա-  
ռուեցին, իսկ տաճիկները սկսեցին առաջուսնից  
կրկնապատիկ աւելի պահանջել—այն ժամանակի  
միայն բանը հասառ կալանաւորութեան, ծեծի  
անջանքի, մի խօօքով, տաճկական բանի:

Կեանքը անտանելի էր դառնում մեզ: Մեր համբե-  
րութիւնը, որ վերջին հինգ տարուայ ընթաց-  
քում հաղիւ զապում էինք, մօտ էր արդէն  
հատնելուն: Հէսց այդ միջոցին, հերցեգովինայի  
ապստամբութիւնը խեղդելու անյաջող փորձերի  
պատճառով տաճիկները ամբողջ ձմեռը սպա-  
ռում էին մեզ կոտորել: Մենք դառն սրտով  
տեսնում էինք, ինչպէս այդ սպառնալիքները  
մօտենում են իրագործուելուն, ինչպէս բաշե-  
բղուկները և չերքեզները սրում են իրանց եա-  
թաղանները և լցնում են հրացանները: Մեր  
կեանքը առանց այն էլ քաղցը չէր մեզ, բայց  
տաճիկ ամբարտաւան դէմքը իւր լըրութեամբ  
աւելի ևս դառնացում էր և անտանելի էր  
դարձում իւր սպառնալիքներով:

Եցդ բոլորից յետոյ ապստամբութիւնը վճռո-  
ուած բան պէտք էր համարել... Պանագիւրի  
Բալկանի 42 գիւղերի ներկայացուցիչների ժո-  
ղովը երկը օրուայ խորհրդածութիւնից յետոյ  
կանխապէս հաստատեց ապստամբութեան վը-  
ճիոր: Մրանից յետոյ բոլորի դէմքը արդէն  
ուրիշ բան էր արտայայտում: Ես ականատես

22-0 156

3246-55



էի հայրենակիցներիս համարեա անբնդհատ ժառ  
զավուրին, թէև նրանց վճրաները և նախաղձե-  
րը ինձ համար, ինչպէս առհասարակ բոլոր  
կանանց համար, գաղանիք էին մնում պարզ  
էր միայն, որ մի չեղած բան է որոշվում:

Մի անգամ մարտի վերջերքում, երբ ես ու-  
սուցական զբաղմունքներս վերջացնելուց յետոյ,  
պատրաստվում էի առւն գնալու, ինձ մօտ եռ  
կաւ քաղաքացիների կազմից ուղարկուած մի  
մարդ և իննդրեց ինձ գնալ ուսուցիչներից մէկի  
տունը: Ես գնացի: Մանելով սենեակը, ուր ժառ  
զով եր հաւաքուած, ես ամենից առաջ նկա-  
տեցի ինձ անծանօթ մի մարդու, որ ամենից  
առելի էր առաքացած երեսում: Իմ մասնելովս  
խօսակցութիւնը ընդհատուեց: Ես օգուտ քա-  
ղեցի գելքից ամենին բարելու. երբ հերթը  
անծանօթին հաստու, մեզ մօտ ընդունուած սո-  
վորութեան համեմատ, ես հաբցրի՝ ում տես-  
նելու պատիւն ունիմ, և որտեղացի է նա: Նա  
պատսախանեց. «Խսկապէս ասել քեզ այդ մա-  
սին ես չեմ կարող, բայց մօտաւորապէս—ես  
նա հմ, որ իմանում է ամեն բան—և չգիտէ ո-

չինչ, որ լինում է ամեն տեղ—և ոչ մի տեղ,  
խօսուած է ամեն բանի վրայ—և ոչ մի բանի վրայ,  
այսինքն է» «—զայտի ապահովածք էմ, իսկ երեւ էս-  
մուսած է» և առասպեալ որ +արզուած է ժողո-  
վուրդին պատրաստուած և որ վիճերու շուրջու կհաս-  
նի այն օրը, երբ տաճիկները անսպասելի կեր-  
պով կյարձակուեն մեզ վրայ և ոչխարիների նման  
կ'մորթեն մեզ: Յետոյ նա մաճրամասնօրէն պատ-  
մեց տաճիկների պատրաստութիւնների և նը-  
րանց զիտաւորութիւնների մասին: Նա ապա-  
ցուցանուած էր, որ մարդկային իրաւունքների և  
կրօնի հիման վրայ մենք պատրական ենք պաշտ-  
պանել մեր անձը. Հաւատացնուած էր, որ ոչ  
ոք չէ խորում մեզից մեր մարդկային և ազգա-  
յին իրաւունքները, բայց որովհետեւ նրանք  
խօսուած են մեր ձեռքից, մենք ուշաք է յետ առ-  
նենք: Իսկ այդ կը լինի միայն այն ժամանակ  
երբ մեզնից իւրաքանչիւրը ձեռք կը վերցնէ ի-  
րանից և կը զօհէ իրան հայրենիքի սեղանի  
վրայ, այսինքն միասին, համաձայն և վճռողա-  
կան կերպով:

— Արդեօք Ճշմարի՞տ չէ, կարձաւ նա ինձ:

— Այդ ձշմարիս է, պատասխանեցի ևս:  
 — Եթէ այդպէս է, դու էլ պէտք է աշխա-  
 տես օգնել քո աղջիդ, ասաց նա:  
 — Ինչո՞վ եմ ես կարող օգնել կնիկ տեղովս,  
 հարցրի ես:

— Ահա, ասաց նա, ցըյց տալով ներկայ ե-  
 ղողներին, այս բոլոր պարոնները միաձայն ցան-  
 կութեամբ քեզ վրայ պարտք են դնում կա-  
 րել մի դրօշակ բուլղարական կտրիչների համար:  
 Համաձայն ես:

Սյդ ինձ համար բոլորովին անսպասելի էր:  
 Ես զարմացած նայեցի ներկայ եղաներին, ո-  
 րոնց մեջ կային հասակ առած մարդիկ էլ ո-  
 րոնք մեծ նշանակութիւն ունեին քաղաքում.  
 Նրանք զլխով արեցին, իբրև զրական պատաս-  
 խան իմ նայելուա: Ես տառանվում էի և խրնդ-  
 րեցի, որ ինձ մատածելու և ծնողներիս հարցնելու  
 ժամանակ տան: Վերոյիշեալ անձանօթք, որ իրան  
 Գէորգ Բենկովսկու տեղ էր անուանում, ասայ.

— Սյստեղ արդէն ծնողների համաձայնու-  
 թիւն չեն հարցնում: Ընդհանուր ժողովը վրձ-  
 ռել է, և դու պիտի կատարես:

— Լաւ, ես պատրաստ եմ կատարելու ընդ-  
 հանուրի հրամանը, ասացի ես, բայց վախճառմ  
 եմ, որ չկարողանամ շնել այնպէս ինչպէս  
 հարկաւոր է, որովհետեւ բուլղարական դրօշակ  
 երբէք չեմ տեսել:

Սյդ ժամանակ Բենկովսկին բացեց գուռը, և  
 սինեակը մտաւ մի կին ձեռքին մի կապոյ:

— Ահա, կարող ես տեսնել ասաց նա ինձ,  
 կապոցը բաց անելով: — Սյդ մեր դրօշակը  
 չէ, դա ուղարկուած է Վալախեայից և պատկա-  
 նում է Կարլովի մտնաժողովին: Մենք վեցը ել  
 ենք այդ ժամանակով, որպէս զի քեզ ցոյց  
 տանք, իսկ երբ նա հարկաւոր չի լինիլ այն  
 ժամանակ յետ կ'ուղարկենք:

Կարլովի դրօշակը կարուած էր թանգագին  
 կտրից և նրա վրա նկարուած էր ոսկով մի  
 կատաղած առիւծ, որ կոխում է կիսալուսինը,  
 նրա զլիսի վրայ փայլում էին այս խօսքերը.  
 «Ալատունիւն կամ ճահ»... Ես շատ հաւանեցի  
 և ասացի, թէ կարող եմ նոյն տեսակը պատ-  
 րաստել: Ինձ արձակեցին տուն:

Տանը ես պատմեցի բոլոր այդ օրը զլիսի

Եկածը: Մայրս վշտացաւ, իսկ հայրս սկսեց փարատել նրա զուր երկիւղը:

Երկու օրից յետոյ 5—6 հոդի քաղաքի առաջնակարգ մարդկանցից Եկան ուստամնաբան և յայտնեցին ինձ, թէ մի տան մեջ արդէն բոլոր պատրաստ է գործելու համար: Վերջայնելով պարապմունքս, ես ներողութիւն խրնդրեցի միւս փարժուհիներից, որ հիւանգութեանս պատճառով ստիպուած էմ առ Ժամանակ դասերիս ըլ յաճախել և ինդրեցի նրանց, որքան կարելի է պարապեն իմ փոխարէն բացակայութեանս ժամանակ:

Գալով ցըց առած առւնը, ես իսկ որ ամէն բան պատրաստ գտայ: Տան աիրոջ խորհուրդով զբուշութեան համար փակեցի սենեակը, և գործում էի մինչև երեկոյ: Գիշերը, թէե առաջարկեցին մնալ այնտեղ բայց ես գնացի տուն: Միւս օրը լուսաբացից առաջ մի և նոյն տնից Եկան յետելիցս: Ես գնացի շարունակելու գործս: Այսպէս շարունակվում էր համարեա մի ամիս, այսինքն, մինչև ապստամբութեան օրը:

Ապստամբութիւնը սկսուեց յանկարծակի,

կամ գոնէ ժամանակից առաջ: Դրօշակը դեռ պատրաստ չէր և ես այդ օրը գործում էի: Միայն նախընթաց երեկոյեան, այսինքն ապրիլի 19-ին մի մարդու հետ փող ուղարկեցին Կ.Պոլս գէնք գնելու, որովհետեւ գէնքի մեջ պակասութիւն էր զգացվում: Վառօդ և գնդակ շատ կար, իսկ հրացան, բելումեր և թուր շատ քիչ էր:

Կոիւ անելու ընդունակ 1860 մարդ կար և այդ բոլորին հասնում էր ընդամենը 600-ի շափ բերանից լցուող հրացան, 100-ի շափ սկզբանից և այդքան էլ սրեր: Այսպէս ուրեմն ապստամբութիւնը յանկարծամասից վրայ հասաւ մեզ: Ապստամբութեան առիթը երկու լուր էր, որ ստացուեյ միաժամանակ նոյն օրը, առաջնորդ Փիլիպպովի միւթեսարդիքը և Թաթար-Բազարծիկի կօլտասին, հեծելազօրքի գլուխն անդած, մեզ մօս էին գալիս մեր քաղաքացիներին, իրեւ խռովարների կապիկոտելու և Փիլիպպովով տանելու դիտառութեամբ, որովհետեւ նրանք մինչև հիմնյ չէին վճարել հարկը, որ համարեա թէ հինգերորդ անգամն էին պահան-

ջում. իսկ երկրորդը՝ Կոպրիվշեցի բնակիչները, որ հինգ ժամուայ հեռաւորութեան վրայ դէպի հիւսիս-արևելք էին զանգում, պատղամաւոր էին ուղարկել մեզ յայտնելու, թէ նրանք տաճիկների բանութիւնները այլ ևս տանել չեն կարող, թէ նրանց մօս կալանառութիւններ են սկսուած և թէն նրանք հէնց այդ օրը ապստամբելու են: Այդ լուրերը ստանալուն պէս թենկով սկին վերցրեց ինձնից Կարլովի վերոյիշեալ դրաշակը և տարաւ շուկայի հրապարակը, ուր հաւաքուել եր արդէն զինուարուածների մի բազմութիւն: Նրանք «ԱԶՈՏՈՒԹԻՒՆ» գոչելով կրակեցին հրացանները և հրամայեցին եկեղեցու զանգակները խփել: Դրանից յետոյ իսկցին շոջապատեցին կոնսակը, ուր դանցում էին հարկ ու տասանորդ հաւաքողները և առաջարկեցին նըրանց անձնատուր լինել: Բայց որովհետեւ տաճիկները պատասխանեցին հրաձգութեամբ որով վերաւորեցին մերոնցից մէկին, այդ պատճառով մերնոք էլ սկսեցին հրացանաձգութիւնը և սպանեցին տաճիկներից երեքին: Այն ժամը կամացած 15 հոգին անձնատուր եղան և

նրանց կեանքը ինսայեցին, որովհետեւ առհասարակ ընդունուած էր իբրև կանոն՝ ոչինչ վեաս չհասցնել իսնարհուազներին: Այդ կատարելուց յետոյ, քաղաքացիները չնորհաւորում էին միմեանց, որ հայրենիքը թշնամիներից մաքրեցին: Յետոյ կազմեցին մի խումբ 60 հոգի ընտիր քաջերից և թենկովսկու առաջնորդութեամբ ուղարկեցին դէպի Թաթար-Բաղարջիկ՝ մեզ վրայ եկող նիվամի դէմ: Մնացած ապստամբները քաղաքապահ գունդ կազմեցին և բանակ դրեցին բլուրների վրայ: Բայց որովհետեւ իրիկնապահին շրջակայ եօթ զիւղերից լուրեր ստացուեցին չերեկների և բաշխ-բուզուկների երեալու մասին, այդ պատճառով ամբողջ գունդը մի քանի խմբերի բաժանեցին և ուղարկեցին նրանց արիւնուուշա աւազակների դէմ: Այդպիսով քաղաքում մնացին միայն կանայք, երեխայք, ծերեր և անդէն մարդիկ: Երկրորդ օրը ապատութեան զրօշակը պատրաստ էր: Քաղաքացիներից ցանկութեամբ ես պէտք է զրօշակը վերցնեի, թուր ու բեզօլվեր կապէի կողքիս, մի լաւձի հեծնէի և ամբողջ քաղաքը պատէի փողոցնե-

բում հաւաքուած ժողովրդին յայտնելու, թէ  
500 տարուայ տաճկական անարդ լուծը արդեն  
ընդ միշտ վայր ենք զցել մեղնից:  
Այդ մեր կարծատե աղատութեան ամենատ-  
հանդիսաւոր օրն էր: Ապիտականիցեր ծերունինե-  
րը մանկահաստակ երեխաների հետ վազ էին  
տալիս յետևից, ուր որ գնում էի, և երգում  
էին աղբային սիրելի օրչներգութիւնները. կա-  
նայքը, աղջկերքը և պառաւները այնքան հո-  
տուէտ և զբանդոյն փնջեր էին զցում մեր  
առաջը, որ ամբողջ ձանապալշը գորդի նր-  
ման ծածկուած էր ծաղիկներով: Ուռա՛ և կեցցէ՛  
կանչելուն վերջ ըսկար: Այդ հանդիսաւոր շրջա-  
գայութիւնը շարունակուեց մինչեւ երեկոյ: Արեք  
մտնելուց յետոյ ամբողջ քաղաքը և նրա շըր-  
ջապատող բլաները լուսաւորուած էին ան-  
թիւ կրակներով: Քայց քանի իէս գիշերը մո-  
տենում էր, վառուած խարոյկները հանդում  
էին, աղաղակները երգերը և ձայները խանում:  
Վերջապէս ամեն ինչ ձեռք բերած աղատու-  
թեան քաղցր յուսով ընկպմուեց խոր քնի մէջ:  
Միւս օրը առաւօտեան հաւաքուեցին իշխան-

ները, խորհուրդ արեցին և վճռեցին մարդիկ  
ուղարկել բոլոր խմբերի մօա՝ իմանալու թէ  
ի՞նչ դրամթեան մէջ են զործերը: Նոյն օրը երե-  
կոյեան վերագարձան ուղարկուած մարդիկը և  
և յայտնեցին, թէ ամեն տեղ գործերը շատ  
լաւ են գնում: Մի քանի աննշան ընդհարում-  
ներ են եղել չելքեզների և բաշխ-բուզտէկների  
հրօսակների հետ, բայց ամեն տեղ էլ վերջա-  
ցել է նրանով, որ թշնամիները երկիւզեց փա-  
խել են, որովհետեւ մերոնք յարձակվում են  
եղել կատաղի քաջութեամբ և աշխատում են  
եղել ամենից առաջ զլխաւորներին գետին զը-  
լուրել: Գէպի Թաթար-Բաղարջիկ ուղարկաւած-  
ներն էլ պատմեցին, թէ մեր քաղաքը եկող  
նիզամի գունդը, որ Փիլիպաուոլով միւթեսաշի-  
ֆի և Թաթար-Բաղարջիկի Աշմագ աղայի հրա-  
մանատարութեան տակն էր, մեր քաղաքից 15  
վերսացանի հեռաւորութեան վրայ էր գտնվում,  
թէ հինց որ նա նկատեց թմբերի մէջ թագ-  
նուած ապստամբներին, որոնք նշան տալուն  
պէս կարծես գետնից բուսան, խկոյն առանց  
մի հրացան խիելու յետ փախաւ՝ «Մոսկով—

գեավուրը բոլորիս կը կոտորէ», աղաղակելով։  
Տաճիների մէջ վաղուց լուր էր տարածուել  
թէ Պանագիւրի ամրողջ Բաղկանը լեբն է Մոս-  
կով-գիւռուրներով, որոնք թագնուած են միայն  
մինչև մի որոշեալ ժամանակ։ Հէնց այդ պատ-  
ճառով էլ նրանք այժմ մեր մալուկանց ընդու-  
նեցին ոռուսների տեղ։ Նրանց սխալեցրեցին ապս-  
տամբների հագած շորերը և պղնձէ առիւծներով  
և սիրամարգի փետուրներով մորթեայ զտակ-  
ները։ Ինչ և իցէ այդ ծիծաղալի փախուսար  
բաւականին քաջալերեց մեր քաղաքացիներին։  
Նրանք սկսեցին քէֆ անել։ Բայց մ.ծամեծների  
մէջ զտնուեցին այնպիսիները, որոնք ըլխաբուե-  
ցան այլպիսի թեթև յաղթութիւններով։ Նր-  
րանց համար թշնամու փախուսար, ինչի հե-  
տեանք էլ որ լինէր, հանաք բան չէր երեսում։  
Եթէ տաճիները կարծել էին, թէ այնուեղ զտըն-  
վում են ոռուսներ, կամ, գոնէ, բազմաթիւ ապս-  
տամբներ, այն ժամանակ երկու կամ երեք  
ժամից յետոյ նրանք կարող էին Թաթար-  
Բաղարջեկից հեռազրել կ.Պօլիս և օգնու-  
թիւն խնդրել այնտեղից։ Մերոնց լաւ յայտնի

էր, որ այդ ժամանակ Փիլիպպուլում կա-  
նոնաւոր զօրք չկար, բայց կարելի էր իսկցին  
11<sup>2</sup> օրում շատ հեշտութեամբ երկաթուղիով  
հասցնել Թաթար-Բաղարջեկ, իսկ այնաեղից  
մեղ մօտ։ Այդ պատճառով նրանք կարծում  
էին, որ պէտք է մտածել եռանդուն ընդդիմա-  
դրութեան մասին և ըսպէտք է ժամանակ կոր-  
ցնել։ Դրա համար նրանք խորհուրդ կազմեցին  
և վճռեցին որքան կարելի է շուտով ամրացնել  
Թաթար-Բաղարջեկի ճանապարհը։

Միւս առաւեօեան մի քանի յարմար աեղե-  
րում մէծ եռանդով սկսեցին գործել։ Զեռքերի և  
գործիքների պակասութիւն չ'կար։ Չորս հազարից  
աւելի մարզ և կին աշխատում էին խրամներ  
փորելու և պատճեններ կանգնացնելու և շո-  
տով պէտք էր վերջանել փայտեայ թնամնօթ-  
ները և տեղաբորել յարմար և հարկաւոր կե-  
տերում։ Քարե, կամուրջը, որ շննուած էր մի ան-  
դրւնդի վրայ, այդ օրը վառօդով քանդեցին։  
Երրորդ օրը երեկոյեան գործեր արդէն վերջաց-  
րած էին և քաղաքը կարող էր իրան խկապէս  
ապահով համարել։ Այնու ամենայնիւ հէնց նշյն

օրը մի քանի մարդ հարց բարձրացրին, թէ տու  
ծիկները կարող են ուրիշ տեղից ել յարձակ-  
ուել: Խոկոր, հարկաւոր եր հոգալ երկու անց-  
քերի մասին, այն է արևմտեանի: — Սօֆիայի-  
և հարաւարեւեանի: — Փիլիպպովովի անցքերի  
մասին: Խեչ վերաբերում եր առաջնին՝ մերոնք  
գոնէ առ ժամանակ նրան բոլորովին անվանդ  
էին համարում: Խոկ երկորդը հարկաւոր հա-  
մարեցին ամրացնել որովհետեւ կ. Պօլսի զօրքը  
անկարելի գանելով Թաթար-Բագարջեկի անցքը  
մտնելը, հարող եր հեշտութեամբ շուռ առ  
այդ կողմի: Մերոնց ենթալլրութիւնը կամա-  
րուեց աւելի վաղ, քան իրանք էին ազնուամ:

Ապրելի 21 ին հենց այն ժամանակ, երբ մե-  
րոնք դուրս եկան քաղաքից բանելու, Սարել-  
չափից խմբից ուղարած սուրհանդակը յայտ-  
նեց նրանց թշնամու անթիւ զօրքի յանկար-  
ծակի երեալը և ասաց, թէ խումբը անցնապաղ  
օգնութիւն է խնդրում: Դեռ չորս օր դրամից  
առաջ մեր՝ 60 հոգուց բազկացած մի փոքրիկ  
խումբը դուրս եկաւ քաղաքից և յարձակուեց  
ստամիկուլդարական Սարելչափից վեղի վրայ, որը

քաղաքից երեք ժամուայ հեռաւքրութեան վրայ  
է գոնվում: Բայց ստամիկ քնակիչները, վաղուց  
զինուած լինելով կառավարութեան կողմից լաւ  
ասեղնաւոր հրայաններով, դուքս եկան նրանց  
դէմ և ակսեցին կուռել: Սակայն չըդիմոնալով  
մերոնց զօրութեան, ստամուած եղան շուտով  
յետ քաշուել և ոգաստագրուել մէշեղի մէջ: Մեր  
խումբը պաշարեց մէջեղը և առաջարկեց պա-  
շարուածներին անձնուատուր լինել: ստամիկները չը  
հաւասարով թէ նրանց կեանքը կինայեն, մեր-  
ժեցին: Այն ժամանակ մերոնք կրակ տուին  
տաճիկների թաղը, սկզբից այդ մասին յայտ-  
նելով թշնամիներին: Կրակը տեսեց ամբողջ 4  
օր և վերջապէս սիսեց սպառնալ մէշեղին նրա  
մէջ թագնուածները յուսահատական յարձա-  
կումներ էին անում մէշեղից և արդէն պատ-  
րաստ էին անձնուատուր լինելու, երբ յանկարծ  
զիմացի բարձրութեան վրայ երեաց 70 հոգուց  
բազկացած հեծելավոր խումբ, որ Օսմանով  
զիւղից օդնութեան եր գալիս պաշարուածնե-  
րին: Այդ ժամանակ 40 հոգուց բազկացած կոպ-  
րիչների խումբը, որ մի փոքր տռաջ եկել

էր մերոնց օգնելու, դուքս եկաւ օսմանյին ների դէմ և սկսեց կռուել բայց երկար չըգիմացաւ և փախուստ տուեց. մերոնք օգնութիւն հասցրին նրանց և փախցրին թշնամիներին. Սակայն տաճիկները վերադարձան նոր ուժով և կրկն մերոնց վրայ յարձակուեցին. մերոնք չըկարողացան դիմանալ իրանցից կրկնապատիկ աւել թշնամուն: Այն ժամանակ խմբի միւս մասը, որ պաշարել էր մէջը, թողեց իւր գործը և միացաւ կռուողների հետ: Սկսուեց արիւնահեղ կռիւ, որը տեսեց ամբողջ մի ժամ. այստեղ տաճիկները բոլորովին յաղթուեցան և փախան դէպի Օսմանով:

Այդպէս ուրեմն չընայելով որ Սարէլչան անցաւ մեր ձեռը, մէնք այնտեղ երկար մնալ չըկարողացինք, որովհետեւ հէնց մի և նոյն օրը երեացին բաշի-բուզուկները և տաճկական կանոնաւոր զօրքը, Աֆրազ և Աղիլ փաշաների առաջնորդութեամբ: Այդ նկատելով մեր զօրքի խումբը թողեց իսկոյն Սարէլչան և Ցերովսի անտառում զիւք բռնեց, որ զանվում էր զիւղեցը ոչ շատ հեռու:

Երբ զիւղի իշխանները այդ իմացան, իսկոյն մարդիկ ուղարկեցին միւս զօրախմբերին իմաց տալու, որ շրւտով մեզ օգնութիւն հասցնեն: Բայց նրանք բոլորն էլ մերժեցին մեր հրաւերը, որովհետեւ փախենում էին, որ անպաշտպան ֆնացած զիւղերը բաշի-բուզուկների բարբարոսութիւններին զօհ կը դառնան: Ամենամեծ և ամենամօտ զօրախումբը, որ պաշտպանում էր Թաթար-Բազարջիկի անցքը, ենթադրելով, թէ տաճիկները այդ կողմից էլ կը յարձակուեն, նոյնպէս օգնութիւն չըկարողացաւ հասցնել մեզ: Դրութիւններս շատ զժուար էր. իշխանները բոլորովին շփոթուել էին և չըգիտէին ի՞նչ անեն:

Մինչ այս, տաճկական զօրքը զբաւեց Սարէլչան: Միւս օրը, ապրիլի 27-ին, տաճիկները վճռեցին գնալ ապստամբների հուեից. երբ նրանք պատահեցին ապստամբներին հերովի անտառում, սկսուեց կռիւր, որ տեսեց ամբողջ 1<sup>1/2</sup> ժամ և վաս հեականք ունեցաւ մերօնց համար: Մեր կրղմից սպանուեց 15 հոգի, այդ թւում և զօրասպետ Թեօգօր Նալբատովը: Հրա-

ցանաձգութիւնը դադարելուց յետոյ, մերոնք  
ուղերուեցին դէպի քաղաք, իսկ տաճիկները,  
վախճանալով դարձնից, մնացին մի և նոյն տե-  
ղում։ Երբ որ կոռուի հետևանքը իմացան, քաղաքի  
բնակիչները բոլորովին, յուսահատուեցին, որով  
հետեւ տաճիկները շատ հեշտութեամբ կարտղ  
էին միւս օրը կոտորել և մնացած 40 հոգին,  
բայց բարեբազզաբար նոյն օրուայ երեկոյեան  
բոլորովին անսպասելի կերպով քաղաքը մնաւ  
Պետրիշի յազթական զօրախումբը, որ ար-  
դէն բաշերուղուներին փախցրել եր դէպի  
Սօֆիայի առջմանները և վերադարձել եր մեզ  
օգնելու։ Այդպիսով մեր զօրախմբի թիւը  
հասաւ 160-ի, որոնք պիտի կոռուին տաճ-  
կական 5000 կտնօնաւոր զօրքի և 3000 բա-  
շերուղուկ ու չերքեզի դէմ։ Այդ 160 հոգին  
Բալաբանովա կոշտած անտառը, որ գտնվում է  
քաղաքից մէկ ժամուայ հեռաւորութեան վե-  
րայ, իրանց համար դիրք ընտրեցին։ Ապրիլի 28-  
ին ես միացայ մեր զիւղի իշխաններից մի քանիսի  
հետ, որոնք ցանկանում էին ներկայ զտնուել

առաջիկայ կռուին մեր զօրքը խրախուսելու  
նպատակով։ Երբ մենք տեղ հասանկ, հեռուից  
երեաց թշնամին սայլերով և լեռնային թնդա-  
սօթներով։ Նկատելով մեր սակաւութիւնը,  
տաճիկները կարծեցին, թէ զօրքը առանց կրո-  
ուի էլ կարող է գլուխ զալ, ուստի առաջ  
էին գալիս մեծ վատահութեամբ և, որքան տեղը  
մօթոյլ էր տալիս, կարգով։ Երբ բաւականին մօ-  
տեցան մեղ, երաժիշտները սկսեցին զինուորա-  
կան մարշը, լսուեցին սպաների հրամանները և  
զինուորները հրացանների բերանները դէպի մեզ  
ուղղացած սարսափելի աղաղակներով՝ «ուրրա-  
Ալլահը մեզ օգնէ» առաջ վաղեցին։ Բայց այդ  
բոպէին ծառերի ետևից օրոտացին 160 հրա-  
ցաններ միաձայն և տաճիկներին մեծ շփոթու-  
թեան մէջ զցեցին։ Երկու կողմից էլ սկսուեց  
սոսկալի հրացանաձգութիւն։ Հրացանների և  
թնդանօթների որոտամբ մի բոպէ անգամ չէր  
դադարում։ Գնդակները կարկուաի նման թափ-  
փում էին մեր չորս կողմը, առանց վեասելու-  
մեղ որովհետեւ գարեոր կազնիները իրանց հզօր  
կիծքերով մեղ սպաշտապանում էին թշնամու

